

# Ինչպես դուրսգրվել IHSS EVV բջջային հավելվածում.

1. Մուտք գործեք՝ օգտագործելով ձեր ESP օգտանունը և գաղտնաբառը:

2. Բարի՛ գալուստ էկրանի վրա, սեղմեք **դուրսգրում**՝ ձեր աշխատանքային օրն ավարտելու համար:

3. Դուրսգրման էկրանին ընտրեք խնամք ստացողին, ում համար դուք դուրս եք գրվում: **Մուտքագրեք աշխատած ժամերը** խնամք ստացողի համար (ըստ ցանկության): **Ընտրեք վայրը**՝ տուն կամ համայնք, որտեղ ավարտում եք ձեր աշխատանքային օրը: Այնուհետև ընտրեք **դուրսգրում**:

4. Ընտրեք «Այո»՝ որպեսզի հաստատեք դուրսգրումը ցույց տրված խնամք ստացողի համար:

5. Ծնորհավորում եմ: Դուք հաջողությամբ ավարտեցիք դուրսգրման ընթացակարգը:

Դուրսգրման հաստատման էկրանին, եթե միաժամանակ ավարտում եք ձեր աշխատանքը մի քանի խնամք ստացողների համար, սեղմեք **Դուրսգրել մեկ այլ խնամք ստացողի** և կրկնեք 3-4 քայլերը: Հակառակ դեպքում գնացեք **Գլխավոր էջ**:

Օգնության համար զանգահարեք IHSS-ի սպասարկման սեղան՝ (866) 376-7066, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան 8-ից մինչև երեկոյան 5-ը: Խնամակալների համար ժամանակի մուտքագրման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [www.cdss.ca.gov/inforesources/ESPhelp](http://www.cdss.ca.gov/inforesources/ESPhelp) կամ <https://dps.lacounty.gov/en/senior-and-disabled/ihs/timesheets-verification.html>



## Էլեկտրոնային այցելությունների ստուգում (EVV) Բջջային հավելված


2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ բոլոր IHSS-ի խնամակալները, ովքեր չեն ապրում խնամք ստացողի(ների) հետ, որի(որոնց) համար աշխատում են, պարտավոր են գրանցվել և դուրսգրվել յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբին և վերջում այն վայրից, որտեղից ծառայությունները մատուցվում են: Խնամակալները կկարողանան գրանցվել և դուրսգրվել ծրագրից՝ օգտագործելով նոր IHSS EVV բջջային հավելվածը (IHSS EVV Mobile App), Էլեկտրոնային ծառայությունների պորտալը (ESP) կամ Հեռախոսային ժամաթերթի համակարգը (TTS):

Ներբեռնեք «IHSS EVV Mobile App»-ը App Store-ից Apple սարքերի կամ Google Play Store-ից՝ Android սարքերի համար: Տեղադրելու համար սկանավորեք ստորև նշված QR կոդը ձեր շարժական սարքի վրա:

IHSS EVV Mobile App

Apple App Store


Google Play Store




# Ինչպես գրանցվել IHSS EVV բջջային հավելվածում

Երբ առաջին անգամ բացեք բջջային հավելվածը, այն կցուցադրի հավելվածի ձեռնարկը: Ուսուցումն ավարտվելուց հետո ընտրեք «Մուտք» էկրանի վերին աջ անկյունում, որը ձեզ անմիջապես կտանի դեպի IHSS EVV ESP մուտքի էկրան:

1. Մուտք գործեք՝ օգտագործելով ձեր ESP օգտանունը և գաղտնաբառը:
2. Բարի գալուստ էկրանին, սեղմեք **Գրանցում (Check-in)**:



3. «Շարունակել» գտնվելու վայրի հայտնաբերումը միացնելու համար, այնուհետև «Թույլատրել» արձանագրել ձեր գտնվելու վայրը, երբ դուք գրանցվում եք:




**Թույլատրել մեկ անգամ/Միայն այս անգամ.** IHSS EVV բջջային հավելվածը միայն մեկ անգամ ֆիքսելու է ձեր գտնվելու վայրը: Երբ նորից մուտք գործեք հավելված, ձեզ կառաջարկվի կրկին «Թույլատրել»:


**Թույլատրել հավելվածն օգտագործելիս/Այս հավելվածն օգտագործելիս.** IHSS EVV բջջային հավելվածը կգրանցի ձեր գտնվելու վայրը միայն այն ժամանակ, երբ դուք օգտագործում եք հավելվածը՝ գրանցման կամ դուրսգրման համար: **Թույլ չտալ/Մերժել.** IHSS EVV բջջային հավելվածը չի կարողանա ֆիքսել ձեր գտնվելու վայրը, և դուք չեք կարողանա շարունակել Գրանցման/Դուրսգրման գործընթացը:

Նշում. Եթե անջատել եք հավելվածի հետ ձեր գտնվելու վայրի փոխանակումը, բացեք «Կարգավորումներ», իջեք ներքև՝ ընտրելու «IHSS EVV Mobile App», այնուհետև «Գտնվելու վայրը» և վերջում «Հավելվածն օգտագործելիս»:


4. Գրանցման էկրանին ընտրեք **խնամք ստացողին**, ում համար գրանցվում եք: **Ընտրեք վայրը**՝ տուն կամ համայնք, որտեղ սկսում եք ձեր աշխատանքային օրը: Այնուհետև ընտրեք **Գրանցում (Check-in)**:



5. Նշված խնամք ստացողի գրանցումը հաստատելու համար ընտրեք «Այո»:



6. Շնորհավորում եմ: Դուք հաջողությամբ գրանցվել եք:



Գրանցման հաստատման էկրանին, եթե դուք սկսում եք ձեր աշխատանքային օրը միաժամանակ մի քանի խնամք ստացողների համար, ընտրեք «Մուտքագրել մեկ այլ խնամք ստացողի» և կրկնեք 4-5 քայլերը: Հակառակ դեպքում, **վերադարձեք գլխավոր էջ:**